ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂՄԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՇՄԱՀ-ՀՄԱԳՀ-ՇՁԲ-24/1

Գ. Ամասիա <<28>> Նոյեմբերի 2024 թ.

Ամասիայի համայնքապետարանը համաձայն 11-10-2024թ-ի ավագանու արտահերթ նիստի, ի դեմս համայնքի ղեկավար Ջ. Հարությունյանի, որը գործում համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և << ՆՈՐ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Քարտաշյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հրատապության սկզբունքով մեկ անձից Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրի փողոցային լուսավորության շինարարակն աշխատանքների կատարումը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 6394118 (վեց միլիոն երեք հարյուր իննսուն չորս հազար հարյուր տասնութ) ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նար ոչնչացված շների հավաքման և անասնագերեզմանոց տեղափոխման ծախսերը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի[1]:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան դեկտեմբերի 31-ը 2024թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **6** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի	<< ՆՈՐ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Համայնքապետարան	Ք.Արթիկ Գ.Նարեկացի 20
ՀՎՀՀ 05544328	ՀՎՀՀ 05550594
ՀՀ 900222051071	ՀՀ 220353332491000
Բանկը՝ կենտրոնական գանձապետարան	ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Համայնքի Ղեկավար Ջ.Հարությունյան	
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

«28» նոյեմբերի 2024 թ. կնքված

ՇՄԱՀ-ՀՄԱԳՀ ՇՁԲ-24/1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքներ							
						մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	*ընդհանուր քանակը*	հասցեն	Ժամկետը***

Համաձայն կից ներկայացված շինարարական աշխատանքների կատարման նախահաշվի:

Հավելված 2
«28» նոյեմբերի 2024 թ. կնքված
ՇՄԱՀ-ՀՄԱԳՀ ՇՁԲ-24/1
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

՝՝ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրի փողոցների արտաքին լուսավորության կառուցման աշխատանքներ												6394118	6394118

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
՝՝ Շիրակի մարզի Ամասիայի
Համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
՝՝ 900222051071
Բանկը՝ կենտրոնական գանձապետարան
Համայնքի Ղեկավար Ջ.Հարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

՝՝ ՆՈՐ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Ք.Արթիկ Գ.Նարեկացի 20
ՀՎՀՀ 05550594
՝՝ 220353332491000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի Համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051071
Բանկը՝ կենտրոնական գանձապետարան
Համայնքի Ղեկավար Ջ.Հարությունյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<< ՆՈՐ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ
Ք.Արթիկ Գ.Նարեկացի 20
ՀՎՀՀ 05550594
ՀՀ 220353332491000
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ

_____

/ստորագրություն/
Կ.Տ

Նախահաշիվ
ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրի
փողոցների արտաքին լուսավորության կառուցման
շինարարական աշխատանքներ
(օբյեկտի անվանումը)

ՀՀ	Հիմնավ.	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գումար									Ընդհանուրը (հազ. դրամ) 12x5
					Նյութեր				Հիմնական աշխատավարձ ռուբ. 1984թ	Հիմնական աշխատավարձ հազ.դր.	Մեքենա-մեխ-երի շահագործում ռուբ. 1984թ	Մեքենա-մեխ-երի շահագործում հազ դր.	Ընդամենը հազ. դրամ 9+10+11	
					Չ/Մ	ծախս	միավորի գին հազ.դր	Միավորի գումար հազ. դր.						
1	2	3	4	5	6	7	8	9	10'	10	11'	11	12	13
		Արտաքին լուսավորման ցանց												
1	E8-612-2	Լուսավորության վահան, մետաղե արկղ, հերմետիկ, 600x500x200մմ ,	հատ	1				34,96	1,48	3,46	0,08	0,26	38,67	**38,674** .
		Լուսավորության վահան, մետաղե արկղ, հերմետիկ, 600x500x200մմ			հատ	1	30,00	30,00						
2	E8-525-1	Անջատիչ ավտոմատ,1բեվեռանի I=63Ա	հատ	1				1,37	0,45	1,05	0,03	0,08	2,50	**2,498**
		Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=63Ա			հատ	1	1,17	1,17						
3	E8-525-1	Անջատիչ ավտոմատ,1բեվեռանի I=25Ա	հատ	1				0,97	0,45	1,05	0,03	0,08	2,10	**2,098**
		Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=25Ա			հատ	1	0,83	0,83						
4	E8-525-1	Անջատիչ ավտոմատ,1բեվեռանի I=16Ա	հատ	3				0,97	0,45	1,05	0,03	0,08	2,10	**6,295**
		Անջատիչ ավտոմատ, 1բեվեռանի I=16Ա			հատ	1	0,83	0,83						
5	E1-441 կիրարկ	Հենասյան հիմքի գրունտի փորում հորատող մեխանիզմով, d=50սմ, h=0.8 մ	100 հատ	0,22					0,18	0,43	2,05	6,59	7,02	**1,545**
6	E1-967	Գրունտի ձեռքով փոռում	մ3	3,44					0,42	0,97			0,97	**3,336**
7	E1-1184	Գրունտի տոփանում	մ3	3,44					0,06	0,14	0,03	0,11	0,26	**0,885**
8	E23-3	Խճայինշերտ հիմքերի տակ h=10սմ	մ3	0,440				5,13	0,890	2,08			7,21	**3,171**
		Ավազ			մ3	1.1	4.00	4.40						
9	E6-2	Հենասյուների բետոնե հիմքեր, բետոն B15	մ3	2,90				35,49	2,45	5,73	0,37	1,19	42,40	**122,970**
		Բետոն B15			մ3	1,02	29,86	30,45						
10	E33-53	Մետաղական հենասյուների պատրաստում և տեղադրում (d=108x4մմ, L=7.60մ) , 345 հատ, -Խողովակ d=108x4մմ, 345հատ*10.26կգ*7.6գծմ=26 902կգ, 2622գծմ -Լայնակ, անկյունակ 50x50x5մմ, L=600մմ, 345հատ, 766կգ , 207գծմ --Ամրան Φ10մմ AIII,3.7կգ 345տեղ=1276կգ -Տակամասի մետ. հենարան d=160x160x8մմ, 345x.1.6կգ=552կգ, 8.84մ2 -Վերնամասի մետ. ծածկոց d=108x8մմ, 345x.0.57կգ=197կգ, 3.1մ2	տն	1,8900				500,00	13,60	51,8	23,04	74,25	626,0	**1183,209**

1	2	3	4	5	6	7	8	9	10'	10	11'	11	12	13
		Խողովակ d=108x4մմ, 345հատ*10.26կգ*7.6գծմ=26 902կգ, 2622գծմ			գծմ	1387,3	3,95	5472,9						
		Լայնակ, անկյունակ 50x50x5մմ, L=600մմ, 345հատ, 766կգ , 207գծ			գծմ	109,524	1,34	146,87						
		Ամրան Φ10մմ AIII,3.7կգ 345տեղ=1276կգ			կգ	675,132	0,35	235,62						
		Տակամասի մետ. հենարան d=160x160x8մմ, 345x.1.6կգ=552կգ, 8.84մ2			մ2	4,91111	25,19	123,69						
		Վերնամասի մետ. ծածկոց d=108x8մմ, 345x.0.57կգ=197կգ, 3.1մ2			մ2	1,72222	25,19	43,37						
11	E8-363-1	Բարձակ մեկճյուղանի `d=48x3մմ L=1.5մ),345հատ	հատ	22				0,00	1,54	3,60	3,30	10,64	5,00	110,000
		Մետաղե խողովակ, `d=42x2մմ L=2.0մ, 2*345=690գծմ			գծմ	0,0	1,21	0,00						
		Ծալքավոր մեկուսիչ խողովակ d=20մմ, 2.2*345=759գծմ			գծմ	0,0	0,10	0,00						
12	E8-288-1	СИП 4x16մմ2 +1x25մմ2 էլեկտրահաղորդման գծի անցկացում օդով	գծմ	700				2,77	0,055	0,13	0,006	0,02	2,92	2045,979
		СИП, 4x16մմ2 էլ հաղորդ. գիծ			գծմ	0,22	0,82	0,18						
		АПВ 1x25մմ2 էլ հաղորդ. գիծ			գծմ	0	0,14	0,00						
		Միացման սեղմակ,550հատ			հատ	0,78571	1,30	1,02						
		Ամրացման ամրակ, 550հատ			հատ	0,78571	1,50	1,18						
13	E8-594-1	Փողոցի լուսատու նոր տեղադրված հենասյուների վրա LED 60w,	հատ	22				15,40	0,580	1,36	0,580	1,87	18,62	409,743
		Փողոցի լուսատու, LED 60w,			հատ	1	20,83	20,83						
14	E15-614	Նոր տեղադրված մետաղական հենասյուների ներկում հակակոռոզիոն ներկով	մ2	59,3				0,41	0,38	0,90	0,000	0,001	1,31	77,741
		Ներկ հակակոռոզիոն			կգ	0,271	1,20	0,33						
		Օլիֆ			կգ	0,027	1,07	0,03						
15	E8-472-7	Հողանցման հաղորդաթիթեղ շերտավոր պողպատից՝ 40x4մմ չափ.	մ	22				0,62	0,13	0,31	0,002	0,006	0,94	20,604
		Շերտավոր պողպատ 40x4չափսերով			մ	1	0,53	0,53						
16	E8-471-1	Հողանցման էլեկտրոդներ, մետաղե անկյունակ 40x 40x5մմ,	Հատ	22				0,58	0,05	0,11	0,07	0,23	0,91	19,985
		Մետաղե անկյունակ 50x 50x5մմ, 8,1գծմ			մ	0,37	1,34	0,49						
		Ընդամենը												4048,734
		Առավելագույն կշիռ												1,00
		Ընդամենը												4048,734

ԸՆԴԱՄԵՆԸ		4048,734
ՎԵՐԱԴԻՐ ՇԱԽՍԵՐ	13,3%	538,482
ԸՆԴԱՄԵՆԸ		4587,216
ՇԱՀՈՒՅԹ	11,0%	504,594
ԸՆԴԱՄԵՆԸ		5091,810

Կազմեց՝ Տ. Միքայելյանը